

ՏՊԱԳՐՈՒՄ Է
2003թ.
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հիմնադիր եւ հրատարակիչ «ՍՅՈՒՆԻԱՅ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-Լ:
ՀԱՍՑԵ՝ ք. ԿՄՊԱՆ, ՇԱՐՈՒՑԱՆ 20/32: ԴԵՌԱՆՈՍ՝ (0285)
5 25 63 0 (091) 45 90 47 0 (077) 06 28 02

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիպարան Մեծ»
հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մասով: Տպագրանակը՝ 2000:

ISSN 1829-3468
1 3 0 3 0
9 771829 346006

Այունյաց երկիր

S U N I O R S U Թ Ե Ր Թ

www.syuniacyerkir.am

Գինը 100 դրամ:

ՀԱՄԱՔ
9 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2013թ. • № 30 (303)



ՏԱՐԵՂԱՐՁ

ԹՅԾԾԶՊՃԱԾԱԾ ԻՉՁՁՅՍԱԷ ԹՅՕՅԹՅՁՅՐԻ ԶԵՐՈՒ ԹՅՍԾՅՁՅՐԻ ՍՅՍԱԷ ԹՅԻ

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ. «Զգտում եմ, որ իմ պաշտոնավարման ավարտին քաղաքի զարգացման համար ամուր հիմքեր լինեն դրված»

2012թ. սեպտեմբերի 9-ին տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունների արդյունքում Կապանի քաղաքապետ ընտրվեց Աշոտ Հայրապետյանը, ով իր պարտականությունների կատարմանն անցավ նոյեմբերի 13-ին: Նախընտրական խոստումների իրագործման, ՏԻՄ ընտրությունների առիթով Կապանում ստեղծված իրավիճակի, մարզկենտրոնի հիմնախնդիրների լուծման հնարավոր տարբերակների մասին է գրույցը Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի հետ:

Քաղաքապետարանի մեկ տարվա գործունեությունը

■ ԶԱՐԿԱԾՔ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ

Համայնքի 2013թ. բյուջեն (եկամբային մասը) 1 մլրդ 021 մլն 593 հազար 300 դրամ է, որից՝ պաշտոնական դրամաշնորհ՝ 671 մլն 592 հազար 100 դրամ, սեփական եկամուտներ՝ 350 մլն 001 հազար 200 դրամ:

- Համայնքի բնակիչներից ստացված 100 դիմումով խնդրվել է քաղաքապետարանին՝ աջակցելու աշխատանքի տեղավորման հարցում:
- Ապահովվել է քաղաքապետարանի մասնակցությունը դատական 30 նիստի:
- Պարբերաբար թարմացվել է Կապան համայնքի տարածքում մշտական եւ փաստացի հաշվառում ունեցող զինապարտների էլեկտրոնային գրանցամատյանը:
- Քաղաքացիների եւ իրավաբանական անձանց հետ՝ համայնքին առնչվող տարբեր հարցերով, կնքվել է 130 պայմանագիր:
- 34 քաղաքացու նկատմամբ կիրառվել է վարչական պատասխանատվության միջոց՝ տուգանք, ինչի արդյունքում համայնքային բյուջե է մուտքագրվել 6 մլն 590 հազար դրամ:
- Անց է կացվել համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար երկու մրցույթ, որի արդյունքում նշանակվում է կատարվել

- համայնքային ծառայության չորս պաշտոնում:
- Անցկացվել է համայնքային ծառայողների մեկ ատեստավորում, որին մասնակցել է 22 ծառայող:
- Անց է կացվել վերապատրաստման մեկ դասընթաց, որին մասնակցել է 15 ծառայող:
- Տեղի է ունեցել համայնքի ավագանու 8 նիստ, ավագանին ընդունել է 123 որոշում:
- Կազմակերպվել է համայնքի բնակիչների 4 ընդունելություն, որին մասնակցել է 138 մարդ:
- Քաղաքապետարանը ստացել է 1276 գրություն, համայնքի բնակիչների 2226 դիմում:
- Դրամական օգնություն է տրվել 102 ընտանիքի (ընդհանուր գումարը՝ 3,285 մլն դրամ): Եվս 102 ընտանիքի դրամական օգնություն է տրվել «Կապան» բարեգործական հիմնադրամից (ընդհանուր գումարը՝ 3,150 մլն դրամ):
- Նախադարձական ուսումնական հաստատություններ հաճախող 1532 (նախորդ տարում՝ 1453) երեխայից վարձավճարի գեղչից օգտվելու հնարավորություն է տրվել 69 երեխայի, այդ թվում՝ 100 տոկոսով՝ 29, 50 տոկոսով՝ 40 հոգու:
- «Քաունթերփարթ ինթերնեյշնլ Հայաստան» ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության միջոցներով վերանորոգվել է մարմնամարզության մանկապատանեկան դպրոցը

- (10,0 մլն դրամ), վերակառուցվել է Կապանի քաղաքապետարանի երեք սենյակը՝ մեկ պատուհանից օգտվելու ծառայություն մատուցելու նպատակով (9,0 մլն դրամ): Այս ծրագրերի ավարտն ապահովելու նպատակով համայնքը կատարել է ֆինանսական ներդրում՝ համապատասխանաբար՝ 11,0 մլն եւ 8,0 մլն դրամի չափով:
- «Վորլդ Վիժն» կազմակերպության միջոցներով իրականացվել են Բաղաբերոթ թաղամասի N2 ՆՈւՀ-ի դահլիճի վերանորոգումը (3,0 մլն դրամ) եւ Ձորք թաղամասի խաղահրապարակի վերակառուցումը (1,0 մլն դրամ):
- Ընթացքի մեջ են «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի միջոցներով Կապան քաղաքում պլաստիկ շշերի 42 նոր արբանյակի պատրաստման, աղբատեղերի վերանորոգման, պլաստիկ թափոնների սեղմման եւ պահեստավորման տարածքի նախապատրաստման, պլաստիկ թափոնների մանիչի ձեռքբերման եւ բազմակի օգտագործման պայուսակների պատրաստման աշխատանքները՝ 20,6 մլն դրամի չափով (համայնքը կատարել է 6,0 մլն դրամ ներդրում) եւ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի միջոցներով ՄՊԱԿ-ի համակարգային սենյակների նորոգման աշխատանքները՝ 19,5 մլն դրամի չափով (համայնքը կատարել է 3,0 մլն դրամ ներդրում):

Շարունակությունը՝ էջ 3

Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով Սահամանադրության եւ օրենքների համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը:
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՀՈՒՎԱԾ 104

ՕՅ ÷ 3 Կ

Երկնքին մոտ - անտառներից
Դեղին լեռներ գահավիժող,
Նրանց դեղին պատանները
Ես տեսնում եմ -
Թե՛ արթմնի, թե՛ երազում:

Դեղին գույները չեն մեղմվում
Աշնան ձեռնակ սավաններից,
Որ հասել են լեռնակողեր:
Լվացքատան տոթ կա պատեղ
Ու սավաններ շոյող քամի:

Քաղաք, քարե քո պատերի,
Քո ուղղաձիգ սահմանների
Ներսն եմ թողել - ինձ ու սերս:

Երկրի քարե սրտում - քաղաք:
Քաղաք - որ ձուլ երակներով
Ամուր կառչել է այս երկրի
Ատողջ սրտին -
մոլիբդենի եղունգներով -
Ու պղնձե կաթի է ծծում -
կաթ առնական:

Իմ մանկության քաղաքն ահա -
Խտտադեմ է ու մանկադեմ:
Եվ պղնձե մարմին ունի -
կանաչ մազեր:
Երկու ճամփա գիտի միայն -
որ մանկանը
Հեռացնում են - տանում հեռու,
Այլ աշխարհներ -
Մի գույգ պրվող, երկաթյա աչք,
Նաեւ մի հին,
Մի տաք երկինք,

Որի աստղերը ցերեկով են երեսում:
Իսկ գիշերը - դեղին գույներն
Արտացոլվում են լեռներից -
Թե՛՞ երկնքից:

Քո երկինքը կայծակներ
ու օրհնանքներ է
Հեղում -
Կախված ձեռ խոստովի մի
հայացքից:

Ես հիշում եմ լեռն առնական
Ու ծածկում եմ հոգիս մի տաք
Կախարչով,
Որ դրված էր իմ քաղաքին,
Որպես տանիք, որպես երկինք,
Որպես սահման -
Իմ սիրտ եւ հիշողության:

ՈՐՈՍԿ ՍԱՐԱՐՅԱՆ
«Անանուն օրեր»

Կապանի քաղաքապետարանի մեկ տարին



■ ՎԱԶԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀԿ Կապանի շրջանային խորհրդի նախագահ, Սյունիքի փոխմարզպետ

Արդեն մեկ տարի է, ինչ Աշոտ Հայրապետյանը զբաղեցնում է Կապան համայնքի ղեկավարի պաշտոնը: Որպես ՀՀԿ շրջանային կազմակերպության խորհրդի նախագահ, կարծիքս հետևյալն է՝ ոչ միայն բավարար, այլև դրական են գնահատում նրա գործունեությունը: Այս մեկ տարվա ընթացքում նորմալ տեմպերով ընթանում էր քաղաքային տնտեսությունը, բարելավվել են լուսավորությունը, աղբահանությունը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի գործունեությունը, բարելավվել է քաղաքի կենտրոնական մասը: Քաղաքապետը բարեկարգման ծրագրեր ունի, որի արդյունքում քաղաքն էլ ավելի կզարգանա և գեղեցիկ տեսք կունենա: Համոզված կարող եմ ասել՝ նա լիովին կարողարացնի մեր հույսերը:

Մարզկենտրոնի գլխավոր շինհրապարակը

Հինգ ամիս է, ինչ «Եվրոպա» ՍՊ ընկերությունը սկսել է «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վարչական շենքի և բերապետիկ բաժանմունքի մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքները: Կապանի գլխավոր բուժփինանարկի տարածքը վերածվել է հսկա շինարարական հրապարակի: Ծրագրի նախագծային արժեքը 800 մլն դրամ է, որ ֆինանսավորել է Համաշխարհային բանկը: Շինհրապարակ մեր այցելության օրը (նոյեմբերի 5) մասնաշենքի շիննորոգմանը մասնակցում էր 80 հոգի, 30-ը՝ արհեստավոր, մյուսները՝ օժանդակ աշխատողներ, հիմնականում՝ տեղացիներ: Ընդհանուր շինարարական հրապարակը կազմում է 12 հազար քառակուսի մետր՝ չհաշված մասնաշենքից դուրս գտնվող կոյուղագծերի և տաք ջրամատակարարման համակարգի նորացումը: Արդեն ավարտվել են մասնաշենքերի տանիքապատման և ամրացման աշխատանքները, էլեկտրագծերի անցկացումը: Ինչպես տեղեկացրեց «Եվրոպա» ՍՊ ընկերության շինարարության բաժնի պետ Յուրա Նիկոլյանը՝ մասնաշենքերի հիմնանորոգումից հետո մարզ-



■ ԱՇՈՏ ԱՎԱԳՅԱՆ

«Օրիուս» բնապահպանական, տեղեկատվական կենտրոնի համակարգող

Բազմիցս բարձրաձայնել են քաղաքի կանաչապատման խնդրի վերաբերյալ: Մեր առաջարկներին, սակայն, միշտ էլ մակերեսորեն են վերաբերվել քաղաքապետարանում: Հուրախություն մեզ՝ Աշոտ Հայրապետյանը դրականորեն արձագանքեց այդ ծրագրին: Եվ այցելեցինք Վաղիկ Մարտիրոսյանի ղեկավարած «Խուստուփ» ՀԿ տնկարան եւ ընտրեցինք ծառատեսակ, որն ավելի նպատակահարմար է քաղաքային միջավայրի, մասնավորապես Շահունյան փողոցի մայթերի համար: Քաղաքապետը համձն առավ հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին մեկ-երկու անգամ ջրել այդ ծառերը:

Այս տարի եւս մեկ ծրագիր կիրականացվի քաղաքապետարանի հետ մեկտեղ: Նպատակն է Ողջի գետի ջրի ծանր մետաղներով աղտոտման կանխարգելում՝ Կապան քաղաքում՝ մերձափյնա էկոհամակարգի վերականգնման միջոցով: Նաեւ կկատարվի փորձարարական ծառատունկ (պռշնի, դրախտածառ, գիհի): 1.5 հա տարածքում կտնկվի 3500 ծառափայտեսակ: Կվերապատրաստվի 20 մասնագետ՝ աշխատանքները ճիշտ կատարելու համար: Կկազմակերպվեն տեղեկատվական արշավներ: Կանաչապատման միջոցով կդադարեցվի հոսքաջրերի առատությունը: Քաղաքապետարանի աջակցությամբ կբերվի բուսահող՝ փոսերը լցնելու համար:

Աշոտ Հայրապետյանի մասին կարող են շատ բան ասել, բայց առանձնացնում են մի հատկանիշ՝ դիմացինին լսելու և հասկանալու կարողություն ունի և կատարում է իր խոստումները:



«Եվրոպա» ՍՊ ընկերության շինարարության բաժնի պետ Յուրա Նիկոլյան



«Եվրոպա» ՍՊ ընկերության վերահսկողության բաժնի պետ Վաղիկ Միրզոյան

կենտրոնը կունենա վերակառուցված, արդիական չափանիշներով նորոգված բժշկական կենտրոն՝ ոչնչով չզիջող մայրաքաղաքի մեծ բուժփինանարկներին: Հիմնանորոգումը նախատեսված է ավարտել 2015 թվականի հունիսի 6-ին:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



■ ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱԶՅԱՆ

ԵԱՀԿ ծրագրերի համակարգող Սյունիքի մարզում

Կապան քաղաքը գտնվում է սեյսմիկ գոտում: Քաղաքապետը ցանկանում է ստեղծել համապատասխան պաշտպանություն, որպեսզի հնարավոր աղետի ժամանակ (ղա հիմնականում վերաբերում է երկրաշարժին) Արծվանիկի և Գեղանուշի պոչամբարները, որ քաղաքին մոտ են, վտանգ չհանդիսանան հասարակության համար: Մենք, իհարկե, ՄԱԿ-ի հետ համատեղ կաջակցենք քաղաքապետարանին թե՛ ֆինանսապես և թե՛ մասնագիտական տեղեկատվությամբ: Պետք է մայրաքաղաքից հրավիրվի փորձագիտական խումբ, որպեսզի տվյալ տարածքում կատարվեն համապատասխան հետազոտություններ: Այսինքն՝ փորձագետները պետք է գնահատեն սեյսմիկ վտանգը:

Ներկայումս ձեւավորվում է համագործակցության եւս մեկ ոլորտ: Սյունիքի մարզում, մարզապետարանի և քաղաքապետարանի հետ մեկտեղ, նոյեմբերի 11-13-ը կանցկացվի դոնորների և ներդրողների համաժողով: Նպատակը մարզի դիֆերսիֆիկացման հնարավորությունների գնահատումն է: Իհարկե, խոսքը վերաբերում է ոչ հանքային ոլորտի զարգացմանը, քանզի մարզում հանքարդյունաբերությունը գերզարգացած է: Ծրագիրն իր մեջ ներառում է բուսաբուծության, անասնապահության և զբոսաշրջության ոլորտները:

ԵԱՀԿ մարզային կենտրոնի հիմնական գործառույթն է կյուրգիական և տնտեսական ոլորտի անվտանգությունն ապահովելն է, ուստի մենք շահագրգռված ենք, որ, եթե Հայաստանում դարձյալ լինի տնտեսական ճգնաժամ, ձեռնարկատերերը, ֆերմերները և այլք, ովքեր հասարակությանը տրամադրում են աշխատատեղեր, չկանգնեն փաստի առաջ:

ԵԱՀԿ գրասենյակը միշտ էլ քաղաքապետարանի հետ համագործակցել է, և հույս ունենք՝ համագործակցությունը շարունակական կլինի:



■ ՎԱՅԿ ԱՎԱԿԱՆՅԱՆ

Կապան համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհրդի անդամ

Երիտասարդության համար ներկայիս քաղաքապետը հասանելի անձնավորություն է: Քաղաքապետը հետևում է սոցիալական կայքերում կապանցի երիտասարդների գրառումներին և հաշվի առնում նրանց կարծիքը: Մի քանի ամիս առաջ, օրինակ, համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհրդի անդամ Գարիկ Թումանյանը vkapane.ru կայքի ֆեյսբուքյան էջում դիմեց Կապանի քաղաքապետին՝ առաջարկելով քաղաքի մուտքերը խորհրդանշող լուսային վահանակներ տեղադրել: Նրան էին միացել քաղաքի շատ երիտասարդներ: Քաղաքապետն ընդառաջ գնաց երիտասարդներին:

Քաղաքապետի հետ մեր համագործակցությունը սկսվեց նրանով, որ հիմնվեց Կապան համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհուրդ, որի նպատակն է քննարկել կապանցի երիտասարդներին հուզող հարցերը և արդյունքները ներկայացրել պատկան մարմիններին՝ առաջարկելով խնդիրների լուծում:

Երիտասարդության այսօրվա հիմնախնդիրներից մեկը գործազրկությունն է: Բայց դա էլ, իմ կարծիքով, ավելի շատ երիտասարդի մեղքն է: Խորհրդի անդամների նախաձեռնությամբ կապանցի երիտասարդները կարող են իրենց ռեզյումեները թողնել vkapane.ru կայքէջում, որպեսզի կարողանանք նրանց մասնագիտությամբ համապատասխան աշխատանք գտնել:

Քաղաքում շատ բան է փոխվել այս մեկ տարվա ընթացքում: Կատարվել են գիշերային լուսավորության բարելավման, փողոցների, ճանապարհների, տանիքների, վերելակների վերանորոգման աշխատանքներ: Հիմնանորոգվել է նաեւ քաղաքապետարանի հարակից այգին: Իհարկե, դեռ շատ բան կա փոխելու, բայց մենք էլ մեր հերթին պետք է նպաստենք քաղաքի զարգացմանը...



Իմ քաղաքը

Այս վերնագրով Կապանի տոնի առթիվ քաղաքի դպրոցներում անցկացվեց շարադրության նրջույթ, լավագույն ճանաչվածներից մեկը՝ ստորել:



■ ԷՐՈՒՐՈՂ ՉԱԲՐԻԵԼՅԱՆ

N11 դպրոց, X դասարան

Պատմական Այունյաց աշխարհի գողտրիկ ու զարմանահրաշ անկյուններից է Կապանը, որը երազանք ու երգ է, եւ կապանցու հոգին է այդ երգը երգում: Կապանն արեւտտ օր է, փոքրիկ գետակ, գետափի տնակ, օրորոցի ճռռոց, գառան մայուն, սրնգի բեկբեկուն նվագ, երեքնուկի թերթերին սարսռող կաթիլ, որի մեջ բեկվում են երկինքն ու արեւը...

Դու՛ հրաշք ես Կապան, եւ ունես ամանց հմայք: Քո Կապուտըղ լեռան ծյուններից է սկզբնավորվում փոքրկահույզ Ողջի գետը, որը կյանք տալով արդյունաբերական հսկաներին, համբուրելով հինավուրց վանքերի ու բերդերի՝ Վահանավանքի, Բաղաբերդի, Յալիծորի սրբազան պատերը, մոնչախոս ամցնում է մեր սիրելի քաղաքով, եւ մենք հափշտակված զօր ու գիշեր ունկնդրում ենք նրա խորհրդավոր զույգ-պատմությունները:

Կապան, դու նախկինում մի բնակավայր էիր՝ քսենոֆոնյան խարխուլ խրճիթներով, որ կուչ էիր եկել Ողջի գետի ափին՝ փոքրիկ հովտում: Փոքրիկ բնօրրան էիր,



որտեղ մարդիկ ստեղծեցին դափանցու ու կապանցու, սյունեցու եւ զանգեզուրցու յուրահատուկ մի կերպար:

Տարբեր ելուզակների ասպատակությունների պատճառով քո բնակիչները բազմիցս հարկադրված են եղել իրենց բնօրրանի պատմությունը հերթական անգամ սկսել նորից, բայց փառք Աստծուն, որ այսօր կապանցին ինքն է կերտում իր քաղաքի պատմությունը:

Այժմ դու բոլորին զմայլում ես քո լայնահուն փողոցներով, գեղեցկաշուք հրապարակներով, բազմահարկ շենքերով, կանաչազարդ պուրակներով, ուր կան մշտադալար ծառեր ու բուրավետ ծաղիկ-

ներ: Ընդարձակ ծառուղիներդ խճապատ են, մաքուր, փողոցներդ՝ ասֆալտապատ: Բազմաթիվ մշակույթի կենտրոններ... թատրոն, ցուցահանդեսներ, պատկերասրահներ...

Կապան, դու մեր սիրտն ու հոգին ես, մեզ ուժ տվող զորությունն ես: Քեզ նման զմայլող ու գերող է բնությունը: Չորսբուլորն անտառներ, զմրուխտյա թավշով ծածկված մարգագետիններ են, ուր աճում են երփնավառ ծաղիկներ, որոնց վրա ճախրում են ոսկեթեւ թիթեռներ, իսկ երկնքի թավշե կապույտից հավերժական արեւն է ջերմացնում բոլորիս՝ իր բարկ շողերով:

Գեղեցիկ է Խուստուփո, որ խրդախ բազմել ու հսկում է քաղաքի կյանքը, եւ վկան է քո ունեցած արյունոտ էջերի ու հերոսական մաքառումի:

Կապան, դու՛ իմ շունչն ես, եւ իմ սրտի ամեն թրթռով զգում եմ քեզ ու հավատում քո ուժին, հզորությանն ու անցնելիք փառահեղ ճանապարհին...

*Իմ Կապան՝ քաղաք,
Հավերժի աղոթք,
Դու՛ վանքի զանգակ, ռազմի ահեղ փող,
Ներման մեջ թավիշ, ցամառն մեջ եղջյուր,
Չարի դեմ կրակ, սիրո մեջ դու հուր:*



«Ուսանողական ամառ-2013»

Օգոստոսի 7-ին մեկնարկեց արդեն ավանդույթ դարձած «Ուսանողական ամառ - 2013» միջոցառումը, որը համախմբում է հանրապետության տարբեր ուսումնական հաստատություններում սովորող կապանցի ուսանողներին, նրանց առօրյան դարձնում առավել հագեցած, հաճելի եւ օգտակար, հնարավորություն ընձեռում նոր ծանոթությունների: Կապանի մշակույթի կենտրոնի մերձակա հրապարակում տեղի ունեցած բացման արարողությանը ներկա էին Կապանի քա-

ղաքապետ Աշոտ Հայրապետյանը, փոխքաղաքապետ Ռուդոլֆ Սարգսյանը, փոխնարազպետ Վաչե Գրիգորյանը եւ «Ղանդի փրիշ» մեթալս Կապան» ընկերության հանրության հետ կապերի պատասխանատու Գայանե Թադևոսյանը: Ժապավենը կտրելու պատիվը տրվեց Աշոտ Հայրապետյանին, ով շնորհավորեց ուսանողներին՝ մաղթելով անմոռանալի օրեր եւ պահեր: Քաղաքապետը նաեւ նշեց, որ նախաձեռնությունը ոչ միայն ուսանողների հանգիստը կազմակերպելու նպատակ է հետապն-

դում, այլև ուղղված է երիտասարդների քաղաքացիական գիտակցության բարձրացմանը: Հանդիսությանն առաջին անգամ հնչեց միջոցառման օրհներգը, որից հետո ուսանողները ներկայացրին երաժշտական կատարումներ, հունորային բեմականացումներ եւ պարեր: Նախաձեռնող խմբի անդամ Հայկ Կարախանյանի հաղորդմամբ՝ հուլիսի 1-25-ը «Ամառ-2013»-ին մասնակցելու համար հայտագրվել էր հարյուրից ավելի ուսանող:

Միջոցառումը, որ ֆինանսավորում էր քաղաքապետարանը, տեւեց մինչեւ օգոստոսի 17-ը: Ընթացքում կազմակերպեցին մշակույթի օր՝ այցելություն բանգարաններ, սպորտի օր՝ վագր, առողջ ապրելակերպին նվիրված միջոցառումներ, եռօրյա վրանային ճամբար Բաղաբերդում, մեկօրյա այցելություն Արցախ: Օգոստոսի 14-ին Կապանի մշակույթի կենտրոնում անցկացվեց «քաղաքապետի ընտրություն», առաջադրվեց քաղաքապետի երկու թեկնածու՝ Տիգրան Ավագյանը եւ Բագրատ Բաղդասարյանը: Հինգ ձայնի տարբերությամբ Կապան համայնքի ղեկավար ընտրվեց Տիգրան Ավագյանը, ով իր աշխատակազմով ներկայացավ քաղաքապետարան: Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը շնորհավորեց Տիգրանին՝ հույս հայտնելով, որ մեկօրյա աշխատանքը քաղաքապետարանում կտա իմացություն եւ փորձ: Ուսանող «պաշտոնյաները» մեկ օրվա ընթացքում ձեռնարկեցին մի շարք աշխատանքներ՝ երթեւեկության վերահսկողություն Չարենցի փողոցում, Գարեգին Նժդեհի արձանի լվացում եւ շրջակա միջավայրի մաքրում, քաղաքի լուսավորության բարելավում եւ այլն:

ՆՈՒՐԱՐ ԴԱՎԹՅԱՆ
«Այունյաց երկիր», 3 սեպտեմբերի 2013թ.

Այունյաց երկիր

S U S T O R S U թ Ե Ր Թ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 06 28 02:
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԳՐ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

® Այս ամսի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 08.11.2013թ.: